# Ալեքսանդր Ծատուրյան

## Երկու խոստովանանք

Տեր-հա՛յր, մեղքերիս թողությո՛ւն արա.
«Պատմի՛ր, զավակըս. ի՞նչ մեղք ես գործել»:
Ոստիկան էի՝ բանտապետ դառա,
Իմ ճանկից մարդիկ մահո՛վ են պըրծել…
Վա՛յ ինձ, բազո՛ւմ են իմ մեղք ու արատ
Սիրե՛լ եմ կաշառք, սիրե՛լ գողություն…
«Է՛հ, ոչի՛նչ, որդիս, տե՛րն է գթառատ,
Մեղքիդ թողությո՛ւն…»:

Տեր–հա՛յր, մեղքերիս թողությո՛ւն արա,
«Պատմի՛ր, զավակըս, ի՛նչ մեղք ես գործել»:
Սխալմամբ պաս-օր բերանըս առա
Մի կտոր երշիկ… Պասն էի մոռցել…
Տեր-հա՛յր, մասն արա ինձ սուրբ հաղորդի,
Ուրիշ մեղք չունեմ, երկի՛նքըն է վկա.
«Օ՛, մե՛ծ է մեղքըդ… քեզ համար, որդի՛,
Թողություն չըկա…»: